Անհատական տվյալների տրամադրումը փաստաբաններին

04.11.2011 06:58

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ աշխատակազմի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Ա. Ասատրյանը հայտնում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները կարգավորող «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ անհատական տվյալների մշակում է համարվում ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ՝կապված անհատական տվյալների հավաքման, մուտքագրման, համակարգման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, ոչնչացման և օգտագործման հետ: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն անհատական տվյալների մշակումը (այդ թվում հավաքումը, փոխանցումը և օգտագործումը) համարվում է օրինական, եթե անհատական տվյալների մշակվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ անհատական տվյալների մշակումը նախատեսված է օրենսդրությամբ, կամ ուղղակի բխում է օրենքից: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն անհատական տվյալների սուբյեկտի համաձայնությունն անհատական տվյալների մշակման միանշանակ, ցանկացած ձևով արտահայտված կամավոր թույլտվությունն է:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տվյալների սուբյեկտի պահանջով, բացի տվյալ հոդվածի առաջին մասով սահմանված տեղեկություններից, մշակողը պարտավոր է տրամադրել տեղեկություններ՝ տվյալների սուբյեկտի անհատական տվյալների մշակման փաստի, տվյալների սուբյեկտին վերաբերվող՝ մշակվող անհատական տվյալների բովանդակության և դրանց ձեռքբերման աղբյուրի վերաբերյալ, առանց տվյալների սուբյեկտի համաձայնության՝ տվյալների փոփոխման հիմքերի վերաբերյալ: Տվյալների սուբյեկտը պարտավոր չէ հիմնավորել պահանջը:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Օրենքի 3-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մշակողի տնօրինության տակ գտնվող անհատական տվյալները խորհրդապահական տեղեկատվություն են, որոնց մատչելիությունը սահմանափակված է ինչպես Օրենքով, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածներով՝ ելնելով անհատական տվյալներն անօրինական օգտագործելու հնարավոր դեպքերը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունից՝ հիմք ընդունելով այն, որ անհատական տվյալների մշակումը (այդ թվում՝ հավաքումը, փոխանցումը և օգտագործումը) նախատեսված չէ կամ ուղղակիորեն չի բխում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքից՝ հայտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբաններին գրավոր հարցումների հիման վրա անհատական տվյալներ կարող են տրամադրվել միայն անհատական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության կամ տվյալների սուբյեկտի՝ տվյալ փաստաբանի վստահորդ համարվելն ապացուցող գրավոր փաստաթղթի (պայմանագրի, լիազորագրի և այլն) առկայության դեպքում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })